ժամանակի Հայք մատուցին յատեան թագաւորութեանս մերոյ զհրովարտակս՝ զոր ունէին յաղագս վանաց իւրեանց, որք էին՝ 1° հրովարտակ 'ի Մէլիք Աշրաֆէ, որոյ իմաստն է. «Ազգն Հայոց բնակեալ 'ի վանս Ս. Յակոբայ, յայտ արարին մեզ զնեղութիւնս և զվնաս իւրեանց, զոր կրեցին յերեսաց ազգին Վրաց. և մեք գրեցաք զհրովարտակս, զի մի նեղեսցեն զնոսա. գրեցաւ 'ի թուին ٨٨٠ (1477)։ 2° հրովարտակ յաւուրց անտի Մէլիք Զահր Պերգուգայ, յորում վկայէ նոյնպէս ինքն թագաւորն։ 3° հրովարտակ Ղալաունի որդի Մէլիք Նասրէն. գրեալ 'ի թուին ٧٢٩ (1329)։ 4° հրովարտակ 'ի Սալէհ Նասրէն՝ գրեալ 'ի թուին ٧١٥ (1315)։ 5° հրովարտակ 'ի Մէլիք Զահր Ջագմագէն. գրեալ 'ի թուին ٨٥٠ (1446)։ Նոյնպէս նամակ 'ի կուսակալէն, եւ դատաստանագիր քաւակուսի 'ի դատարանէ, յորս բացայայտ գրեալ և ծանուցեալ են, թէ վանքս Ս. Յակոբայ՝ է սեփհականութիւն ազգին Հայոց »։

Յայնժամ հարցին և ցդեսպանն, թէ ունի՞ն ինքեանք եւս գիրս ինչ վասն այսր, ետ պատասխանի և ասէ՝ ես ոչ ունիմ ընդ իս մուրհակս ինչ կամ գիրս, և ոչ գիտեմ թէ ունի՞ թագաւորն մեր։ Ապա խոստովան եղեւ յատենի անդ թէ Հայք տիրեալ են և տիրեն մինչեւ ցայսօր ժամանակի վանաց Ս. Յակոբայ։

Այսոքիկ դատաստանք մինչեւ ցայս վայր զոր գրեցաք, բովանդակեալ էր 'ի միում հրովարտակի, թէպէտ 'ի վերջոյ՝ տողս ինչ մաշեալ։

Եսայի Արք Եպիսկոպոս կամ Պատրիարք աթոռոյն Երուսաղէմի, առ սա գրեաց պապն Հռոմայ Եւգինէոս 4°. Թուղթ, և ընդ նմին առաքեաց զթուղթս առ Կոստանդին կաթողիկոսն Հայոց. փութով հասուցանել առ նա, յորում հրաւիրէր զնոյն ինքն զԿաթողիկոսն ընդ այլոց հայրապետաց փութալ գալ 'ի ժողովն Փլորէնտիոյ։ Իսկ Եսայի Պատրիարք առաքեաց զայն թուղթ 'ի Կիլիկեայ 'ի ձեռն Սարկաւագին իւրոյ որ կոչէր Արալմեհ. և ապա գրեաց առ Եւգինէոս, թէ առաքեցի զնամակն ձեր. Հ. Մ. Ջամչեան. Պատմ. Գ. Երես 474. (1439)։

Վասն այսր ժողովոյ այսպէս պատմէ Արաքացի Յոյն պատմիչն. «Մարկոս եպիսկոպոս փոխանորդ Պատրիարքին